NEW DEMOCRACY FUND

ՀԻՆԱԳԱՅՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՒՅԹԻՆ
ARMENIAN LAWYERS' ASSOCIATION

ՄՈԴՈՒԼ 3

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ.

ՔՀԿ-ՆԵՐԻ ԴԵՐԸ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ուսումնական նյութ լրագրողների, ՀԿ ներկայացուցիչների և իրավաբանների համար

«Ընտրական բարեվարքության և տեղեկատվական դիմակայունության ամրապնդում Հայաստանի մարզերում» ծրագիր

Սույն փաստաթուղթը պատրաստվել է «Ընտրական բարեվարքության և տեղեկատվական դիմակայունության ամրապնդում Հայաստանի մարզերում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից «Նոր ժողովրդավարություն» հիմնադրամի (NDF) ֆինանսական աջակցությամբ:

Բովանդակության համար պատասխանատու է Իրավաբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի «Նոր ժողովրդավարություն» հիմնադրամի տեսակետը:

Փաստաթուղթը պատրաստել է «Ընտրական բարեվարքության և տեղեկատվական դիմակայունության ամրապնդում Հայաստանի մարզերում» ծրագրի ազգային փորձագետ Սյուզաննա Սողոմոնյանը:

Փաստաթղթից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ, 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ 3
Աղյուսակների ցանկ 4
1. Քաղաքացիական մասնակցության իրավունքն ու հնարավորությունները 5
2. Քաղաքացիական մասնակցության նպաստավոր միջավայրի հիմնական պայմանները 8
3. Քաղաքացիական մասնակցության ընդհանուր շրջանակը 8
3.1. Քաղաքացիական հասարակության չափորոշիչները 8
3.2. Քաղաքացիական մասնակցության սկզբունքները 10
3.3. Ինչպե՞ս ներգրավվել 12
4. Քաղաքացիական հասարակության դերը ընտրություններում 15
4.1. Քաղաքացիական հասարակության մոբիլիզացումը ընտրություններում 15
4.2. ՔՀԿ-ների ընտրական ներգրավվածության մոդելներ. համեմատական մոտեցում 17
4.3. ՔՀԿ-ների դերը ընտրողների իրազեկման (voter education) գործում 20
5. ՔՀԿ-ների դերը ընտրողների կրթության ոլորտում. ՀՀ 2021թ. ընտրությունների դասերը (case study) 25

Հապավումների ցանկ

Հայերեն

ԵԱՀԿ ԺՀՄԻԳ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
ԿՀԸ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԻՀՀ	Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՔՔԻՄԴ	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր

Անգլերեն

ADEPT	Մասնակցային ժողովրդավարության աջակցման ասոցիացիա Association for Participatory Democracy
PVT	Ձայների զուգահեռ հաշվարկ Parallel Vote Tabulation
OSCE ODIHR	Organization for Security and Co-operation in Europe, Office for Democratic Institutions and Human Rights

Աղյուսակների ցանկ

1. Աղյուսակ 1. Քաղաքացիական մասնակցության հիմնական սկզբունքները
2. Աղյուսակ 2. Քաղաքացիական մասնակցության օժանդակ սկզբունքները
3. Աղյուսակ 3. Քաղաքացիական դիտարկման և watchdog մոդելների համեմատական ամփոփում

Քաղաքացիների ներգրավվման մեխանիզմները. ՔՀԿ-ների դերը մշտադիտարկման և քաղաքացիական մասնակցության գործում

1. Քաղաքացիական մասնակցության իրավունքն ու հնարավորությունները

Մասնակցության իրավունքը ընտրությունների միջազգային իրավական համակարգի հիմքն է: Այն նշանակում է, որ պետությունը պարտավոր է ապահովել, որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի իրական հնարավորություն ունենա մասնակցելու հանրային կառավարմանը: Այս մասնակցությունը կարող է իրականացվել տարբեր ձևերով՝ քաղաքական կուսակցությունների միջոցով, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ների) ներգրավմամբ, ինչպես նաև տարբեր քաղաքացիական նախաձեռնությունների շրջանակում:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (ՄԻՀՀ) ամրագրում է, որ յուրաքանչյուր մարդ ունի իրավունք մասնակցելու իր երկրի կառավարմանը՝ թե՛ անմիջականորեն, թե՛ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով[1]: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ)[2] այս իրավունքը զարգացնում է՝ ընդգծելով, որ ընտրությունները դրա կարևորագույն ձևերից են[3]: Այլ կերպ ասած, ընտրությունները հանդիսանում են այն հիմնական մեխանիզմներից մեկը, որով քաղաքացիները իրականացնում են իրենց մասնակցության իրավունքը:

«Իրավունքի» և «հնարավորության» միասին նշումը կարևոր շեշտադրում է. այն նշանակում է, որ պետությունը չպետք է միայն ձևականորեն ճանաչի մասնակցության իրավունքը, այլ նաև պարտավոր է իրական պայմաններ ստեղծել դրա իրացման համար: Սա ենթադրում է, որ պետությունը պետք է ձեռնարկի կոնկրետ քայլեր՝ ապահովելով անհրաժեշտ ծառայություններ և ենթակառուցվածքներ, որպեսզի քաղաքացիները կարողանան արդյունավետորեն օգտվել իրենց մասնակցության իրավունքից[4]:

---

[1] Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 21, https://www.arlis.am/hy/acts/1896

[2] Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրն ընդունվել է 1966թ. դեկտեմբերի 16-ին: Հայաստանի Հանրապետությունն այն վավերացրել է 1993թ. հունիսի 23-ին: Դաշնագրի 28-րդ հոդվածի համաձայն ստեղծվել է Մարդու իրավունքների կոմիտե (Կոմիտե): 40-րդ հոդվածի համաձայն մասնակից պետությունները պարտավորվում են զեկույցներ ներկայացնել Կոմիտեին սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների իրականացման ուղղությամբ իրենց ձեռնարկած միջոցների և այդ իրավունքների օգտագործման ասպարեզում ձեռք բերած առաջընթացի մասին:

[3] Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 25, https://www.arlis.am/hy/acts/18500

[4] Ընտրությունների վերաբերյալ միջազգային պարտավորությունները. Իրավական շրջանակի Ուղեցույցներ: Ժողովրդավարության և ընտրական աջակցության միջազգային ինստիտուտ, https://www.idea.int/sites/default/files/publications/international-obligations-for-elections.pdf , էջ 39

Այս իրավունքը ամրագրված է նաև մի շարք միջազգային հիմնական փաստաթղթերում, որոնք ուղղված են հավասարության և խտրականության բացառմանը: Դրանց թվում են՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան (ICERD)[5], Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW)[6], Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան (MWC), ինչպես նաև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան (CRPD)[7]:

Հիշյալ փաստաթղթերը միասին ամրագրում են, որ հանրային կյանքին, հանրային կառավարմանը մասնակցելու իրավունքը պետք է ապահովվի առանց որևէ խտրականության՝ անկախ անձի սեռից, ռասայական կամ ազգային պատկանելությունից, միգրանտ կարգավիճակից կամ հաշմանդամությունից:

«Պետական և հանրային կառավարում» հասկացությունը, ըստ Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 25 Ընդհանուր մեկնաբանության, ունի լայն ընդգրկում: Այն վերաբերում է քաղաքական իշխանության իրականացմանը, այդ թվում՝ օրենսդիր, գործադիր և վարչական լիազորությունների կիրառմանը: Այս հասկացությունը ներառում է հանրային կառավարման բոլոր ոլորտները, ինչպես նաև քաղաքականության մշակման և իրականացման գործընթացները՝ միջազգային, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում[8]: Ինչպես նշվում է թիվ 25 Ընդհանուր մեկնաբանության մեջ (GC 25), մասնակցության իրավունքը անհատական իրավունք է, որի խախտումը կարող է հիմք հանդիսանալ բողոքների ներկայացման համար՝ համաձայն ՔՔԻՄԴ-ի Առաջին կամընտիր արձանագրության (տե՛ս Բաժին III):

Նույն մեկնաբանության համաձայն՝ «լիազորությունների բաշխումը և այն միջոցները, որոնց միջոցով անհատները իրականացնում են պետական և հանրային գործերի կառավարմանը մասնակցելու իրենց իրավունքը (երաշխավորված է 25-րդ հոդվածով), պետք է սահմանվեն սահմանադրությամբ և այլ օրենքներով»:

Մարդու իրավունքների կոմիտեն նաև ընդգծում է, որ «ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով մասնակցությունը իրականացվում է քվեարկության գործընթացների միջոցով, որոնք պետք է ամրագրված լինեն օրենքով»:

---

[5] Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա, https://www.arlis.am/hy/acts/75843

[6] Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, https://www.arlis.am/hy/acts/60505

[7] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա, https://www.arlis.am/hy/acts/64762

[8] Ընտրությունների վերաբերյալ միջազգային պարտավորությունները. Իրավական շրջանակի Ուղեցույցներ: Ժողովրդավարության և ընտրական աջակցության միջազգային ինստիտուտ, https://www.idea.int/sites/default/files/publications/international-obligations-for-elections.pdf , էջ 39

Ըստ թիվ 25 Ընդհանուր մեկնաբանության՝ անմիջական մասնակցությունը ներառում է՝

- օրենսդիր կամ գործադիր լիազորությունների իրականացումը,
- մասնակցությունը հանրաքվեներին և հանրային ժողովներին:

ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Բացի այդ, ՔՔԻՄԴ-ի 25-րդ հոդվածը՝ համադրելով հավաքների, արտահայտվելու և միավորումների ազատությունների հետ, սահմանում է քաղաքացիների իրավունքը մասնակցելու պետական և հանրային կառավարմանը՝ նաև ՔՀԿ-ների և հասարակական միավորումների միջոցով:

Ինչպես նշվում է թիվ 25 Ընդհանուր մեկնաբանության մեջ, քաղաքացիները մասնակցում են պետական և հանրային գործերի կառավարմանը նաև այնպիսի ձևերով, ինչպիսիք են՝ հանրային քննարկումների վրա ազդեցություն ունենալը, իրենց ներկայացուցիչների հետ երկխոսությունը, ինչպես նաև ինքնակազմակերպվելու հնարավորությունը:

Այս մասնակցությունը գործնականում երաշխավորվում է արտահայտվելու ազատության, հավաքների ազատության և միավորումների ազատության ապահովման միջոցով: Այսպիսով, քաղաքացիական մասնակցությունը արդյունավետ է միայն այն դեպքում, երբ գոյություն ունի նպաստավոր միջավայր: Ի լրումն վերոգրյալի, վերը նշված

միջավայրը հիմնված է մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի վրա, մասնավորապես՝

- խոսքի ազատություն (հոդված 10),
- հավաքների և միավորումների ազատություն (հոդված 11)։

2. Քաղաքացիական մասնակցության նպաստավոր միջավայրի հիմնական պայմանները

Այս պայմանների համադրությունը ստեղծում է այն հիմքը, որի վրա հնարավոր է կառուցել իրական մասնակցային ժողովրդավարություն։ Այն հնարավորություն է տալիս ձևավորել վստահության վրա հիմնված հարաբերություններ պետության և քաղաքացիական հասարակության միջև՝ ապահովելով ավելի ներառական և արդյունավետ քաղաքական որոշումներ։

3. Քաղաքացիական մասնակցության ընդհանուր շրջանակը

3.1. Քաղաքացիական հասարակության չափորոշիչները

Հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ները) և ընդհանուր առմամբ կազմակերպված քաղաքացիական հասարակությունը հանդիսանում են ժողովրդավարության և մարդու իրավունքների զարգացման ու իրացման կարևոր դերակատարներ։

Քաղաքացիական մասնակցության համատեքստում ՀԿ-ները ներառում են կազմակերպված քաղաքացիական հասարակության լայն շրջանակ: Դրանց թվում են՝ կամավորական խմբերը, շահույթ չհետապնդող կազմակերպությունները, ասոցիացիաները, հիմնադրամները, բարեգործական կազմակերպությունները, ինչպես նաև աշխարհագրական կամ ընդհանուր շահերի շուրջ ձևավորված համայնքային և իրավապաշտպան խմբերը: ՀԿ-ների գործունեությունը հիմնականում ուղղված է սոցիալական արդարության, մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության արժեքների առաջխաղացմանը: Այս ոլորտներում դրանց նպատակն է նպաստել գաղափարների զարգացմանը և մարդկանց կյանքի բարելավմանը: ՀԿ-ները բաց և ժողովրդավարական հասարակության կարևոր բաղադրիչ են, քանի որ ապահովում են լայն մասնակցություն՝ ներգրավելով բազմաթիվ անհատների: Միաժամանակ, հաշվի առնելով, որ այդ անհատների մեծ մասը նաև ընտրողներ են, ձևավորվում է փոխլրացնող կապ քաղաքացիական մասնակցության և ներկայացուցչական ժողովրդավարության միջև:

ՔՀԿ-ները կարող են կարևոր դեր խաղալ որոշումների կայացման գործընթացում՝ ապահովելով գիտելիք և անկախ փորձագիտական աջակցություն: Այդ պատճառով կառավարությունները՝ տեղական, տարածաշրջանային և ազգային մակարդակներում, ինչպես նաև միջազգային կառույցները, հաճախ դիմում են ՔՀԿ-ների փորձին և կարողություններին՝ քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացում աջակցություն ստանալու համար:

ՔՀԿ-ները վայելում են իրենց անդամների և հասարակության վստահությունը, ինչը նրանց հնարավորություն է տալիս բարձրաձայնել հանրային մտահոգությունները, ներկայացնել տարբեր խմբերի շահերը և մասնակցել տարբեր նախաձեռնությունների: Այսպիսով, նրանք ապահովում են նշանակալի ներդրում քաղաքականության մշակման գործընթացում:

Միաժամանակ, այս մոտեցումը ընդգծում է կազմակերպված քաղաքացիական հասարակության դերը ժողովրդավարական գործընթացներում՝ չսահմանափակվելով միայն առանձին քաղաքացիներով: Ասոցիացիաների և համայնքային կազմակերպությունների ձևավորումը դիտվում է որպես ինքնուրույն սոցիալական կազմակերպման ձև, որը դուրս է գալիս զուտ անհատական գործողության շրջանակներից: Այդ պատճառով դրանք հանդիսանում են մասնակցության կարևոր ուղիներ և նպաստում են քաղաքացիների ներգրավվածության ընդլայնմանը:

Հայաստանում ՔՀԿ-ների ներքո որպես կանոն հանդես են գալիս հասարակական կազմակերպությունները, հիմնադրաման, տարբեր քաղաքացիական նախաձեռնությունները: Հասարակական կազմակերպությունները[9] քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր միավորումներն են, որոնք օրենքով

[9] «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, https://arlis.am/hy/acts/183139/latest

սահմանված կարգով միավորվել են իրենց շահերի ընդհանրության հիման վրա՝ հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու համար: Հիմնադրամները քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ[10]:

3.2. Քաղաքացիական մասնակցության սկզբունքները

Քաղաքացիական մասնակցության արդյունավետ և կառուցողական համակարգ ապահովելու համար ՔՀԿ-ները և տարբեր մակարդակների հանրային իշխանության մարմինները պետք է գործեն մի շարք ընդհանուր սկզբունքների հիման վրա։

Այս սկզբունքները ձևավորում են այն արժեքային և գործնական շրջանակը, որի մեջ հնարավոր է իրական և արդյունավետ համագործակցություն։ Որպես կանոն, հիշյալ սկզբունքները ներկայացվում են ըստ առաջնայնության՝ հիմնական և օժանդակ[11]:

Աղյուսակ 1. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

	Ի՞նչ է նշանակում	Ինչո՞ւ է կարևոր	Ինչպե՞ս է իրականացվում Ի՞նչ է ենթադրում
Բաց և հասանելի (Openness)	ՀԿ-ները ամփոփում են իրենց անդամների, օգտատերերի խմբերի և շահագրգիռ քաղաքացիների կարծիքները և դրանք փոխանցում հանրային իշխանություններին:	Այս տեղեկատվությունը ունի առանցքային նշանակություն քաղաքական որոշումների որակի համար՝ այն դարձնելով ավելի հիմնավորված, հասկանալի և երկարաժամկետ կիրառելի:	Հանրային քննարկումների կազմակերպում: Կարծիքների հավաքագրում համայնքներից: Դիրքորոշումների ներկայացում պետական մարմիններին: Մասնակցային գործընթացները պետք է լինեն բաց, հասանելի և հիմնված հստակ չափորոշիչների վրա:
Վստահություն (Trust)	Վստահությունը նշանակում է, որ հանրային իշխանությունները և ՔՀԿ-ները համագործակցում են ազնիվ, կանխատեսելի և հուսալի ձևով:	Չնայած տարբեր դերերին՝ երկու կողմերն ունեն ընդհանուր նպատակ՝ հասարակության բարելավումը: Այս նպատակին հնարավոր է հասնել միայն վստահության առկայության դեպքում:	Թափանցիկ հաղորդակցություն: Փոխադարձ հարգանք: Ստանձնած պարտավորությունների կատարում:
Անկախություն (Independence)	ՔՀԿ-ները պետք է գործեն ազատ և անկախ՝ իրենց նպատակների և որոշումների իրականացման ընթացքում առանց պետական կամ այլ արտաքին վերահսկողության:	Անկախությունը ապահովում է, որ ՀԿ-ները կարողանան արտահայտել նաև քննադատական դիրքորոշումներ և չդառնան իշխանությունների գործիք:	Սեփական օրակարգի ձևավորում: Դիրքորոշումների ազատ արտահայտում: Քաղաքական կուսակցություններից անկախ գործունեություն:
Մասնակցություն (Participation)	ՔՀԿ-ները պետք է հնարավորություն ունենան մասնակցելու հանրային կառավարման՝ առանց խտրականության:	Սա ապահովում է տարբեր հասարակական խմբերի կարծիքների ներգրավումը քաղաքական որոշումների մեջ:	Երկխոսություն պետական մարմինների հետ: Խորհրդակցություններ քաղաքականությունների շուրջ: Օրենսդրական նախաձեռնությունների քննարկում:

[10] «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենք, https://arlis.am/hy/acts/218999/latest

[11] Որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության բարեվարքության կանոնագիրք (վերանայված տարբերակ), Եվրոպայի խորհուրդ, https://rm.coe.int/code-of-good-practice-civil-participation-revised-301019-en/168098b0e2

ՍԿԶԲՈՒՆՔԸ	Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ	ԻՆՉՈ՞Ի Է ԿԱՐԵՎՈՐ.
Թափանցիկություն (Transparency)	Բոլոր գործընթացները պետք է լինեն բաց և վերահսկելի։	Փաստաթղթերի և նախագծերի հրապարակում։ Տեղեկատվության ժամանակին տրամադրում։ Մասնակիցների նպատակների և շահերի բացահայտում։
Հասանելիություն (Accessibility)	Մասնակցությունը պետք է լինի հեշտ և հասկանալի բոլորի համար։	Պարզ լեզու։ Առցանց և օֆլայն հարթակներ։ Տարբեր տեխնոլոգիաների օգտագործում։
Խտրականության բացառում (Non-discrimination)	Բոլոր խմբերի կարծիքները պետք է հավասարապես լսելի լինեն։	Խոցելի խմբերի ներգրավում։ Հավասար մասնակցության պայմաններ։ Խտրական ընթացակարգերի բացառում։
Ներառականություն (Inclusiveness)	Մասնակցությունը պետք է ընդգրկի բոլոր խմբերին՝ հատկապես հատուկ կարիքներ ունեցողներին։	Երիտասարդների, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավում։ Նպատակային աջակցող միջոցառումներ։ Ակտիվ ներգրավման քաղաքականություն։
Հաշվետվողականություն (Accountability)	Որոշում կայացնողները պետք է պատասխանատու լինեն իրենց գործողությունների համար։	Որոշումների հիմնավորում։ Հանրային վերահսկողություն։ Իրավական պաշտպանության մեխանիզմներ։ Արդյունքների հրապարակում։

3.3. Ինչպե՞ս ներգրավվել

Ընտրական գործընթացներում ՔՀԿ-ների ներգրավվածությունը արդյունավետ և կիրառելի դարձնելու համար ներկայացնում ենք քաղաքացիական հասարակության մասնակցության հնարավոր մի քանի ձևաչափեր, որոնք լայն կիրառում են ստացել տարբեր երկրներում և կարևոր են հատկապես շահերի պաշտպանության իրականացման գործընթացում:

Դրանք կարող են կիրառվել որոշումների կայացման գործընթացի ցանկացած քայլում, սակայն մասնակցության որոշակի մակարդակներ առավել հաճախ արդիական են գործընթացի կոնկրետ փուլերում:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Տեղեկատվության հասանելիությունը հիմք է հանդիսանում քաղաքական որոշումների կայացման գործընթացում ՔՀԿ-ների ներգրավման բոլոր հաջորդող քայլերի համար: Սա մասնակցության համեմատաբար ցածր մակարդակ է, որը սովորաբար

ենթադրում է հանրային իշխանությունների կողմից տեղեկատվության միակողմանի տրամադրում, և ՔՀԿ-ների հետ որևէ փոխգործակցություն կամ վերջիններիս ներգրավվածություն չի պահանջվում կամ ակնկալվում: Այն ներառում է հանրության՝ ողջ քաղաքականության շրջափուլի ընթացքում ողջ տեղեկատվությանը (օրինակ՝ նախագծերին, մեկնաբանություններին և հիմնավորումներին) հասանելիություն ունենալու իրավունքը: Հանրային իշխանության մարմինը պետք է ապահովի, որ հանրությունը ժամանակին ստանա գործընթացին առնչվող ճշգրիտ տեղեկատվություն: Տեղեկատվությունն արդիական է որոշումների կայացման գործընթացի բոլոր փուլերում:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Սա նախաձեռնության այնպիսի ձև է, որի դեպքում հանրային իշխանության մարմինները կարող են ՔՀԿ-ներից կարծիք հայցել կոնկրետ քաղաքական թեմայի կամ զարգացման վերաբերյալ: Խորհրդակցությունը սովորաբար ենթադրում է, որ իշխանությունները տեղեկացնում են ՔՀԿ-ներին քաղաքականության ընթացիկ զարգացումների մասին և հայցում մեկնաբանություններ, տեսակետներ ու հետադարձ կապ: Նախաձեռնությունն ու թեմաները բխում են հանրային իշխանության մարմիններից, այլ ոչ թե ՀԿ-ներից: Խորհրդակցությունն արդիական է որոշումների կայացման գործընթացի բոլոր քայլերի համար, մասնավորապես՝ նախագծման, մոնիտորինգի և վերաձևակերպման փուլերում:

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Երկխոսության նախաձեռնությունը կարող է հանդես գալ կողմերից յուրաքանչյուրի կողմից և կարող է լինել ընդգրկուն կամ համագործակցային:

Ընդգրկուն երկխոսությունը երկկողմանի հաղորդակցություն է՝ հիմնված փոխադարձ հետաքրքրությունների և հնարավոր ընդհանուր նպատակների վրա՝ տեսակետների կանոնավոր փոխանակումն ապահովելու համար: Այն տատանվում է հանրային բաց լսումներից մինչև ՔՀԿ-ների և հանրային իշխանության մարմինների միջև մասնագիտացված հանդիպումներ: Քննարկումը մնում է ընդգրկուն և ուղղակիորեն կապված չէ քաղաքականության մշակման ընթացիկ գործընթացի հետ:

Համագործակցային երկխոսությունը հիմնված է փոխադարձ շահերի վրա՝ քաղաքականության մշակման կոնկրետ գործընթացի նպատակով, ինչը սովորաբար հանգեցնում է համատեղ հանձնարարականի, ռազմավարության կամ օրենսդրության ստեղծմանը: Համագործակցային երկխոսությունն ավելի ուժեղ է, քան ընդգրկուն երկխոսությունը, քանի որ այն բաղկացած է համատեղ, հաճախակի և կանոնավոր հանդիպումներից՝ քաղաքականության առանցքային ռազմավարություններ մշակելու համար, ինչը սովորաբար հանգեցնում է համաձայնեցված արդյունքների:

Երկխոսությունը բարձր է գնահատվում քաղաքական որոշումների կայացման շրջափուլի բոլոր քայլերում, սակայն առանձնահատուկ վճռորոշ նշանակություն ունի օրակարգի ձևավորման, նախագծման և վերաձևակերպման փուլերում:

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Գործընկերությունը ենթադրում է համատեղ պատասխանատվություն քաղաքական որոշումների կայացման գործընթացի յուրաքանչյուր քայլում՝ օրակարգի ձևավորումից, նախագծումից, որոշման կայացումից մինչև քաղաքական նախաձեռնությունների իրականացում: Այն մասնակցության բարձրագույն ձևն է:

Այս մակարդակում ՔՀԿ-ները և հանրային իշխանության մարմինները միավորվում են սերտ համագործակցության համար՝ միևնույն ժամանակ ապահովելով ՔՀԿ-ների (անկախ մնալու) իրավունքը՝ իրականացնելու արշավներ և գործելու՝ անկախ գործընկերային իրավիճակից: Գործընկերությունը կարող է ներառել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են ՔՀԿ-ին կոնկրետ առաջադրանքի պատվիրակումը (օրինակ՝ ծառայությունների մատուցում), ինչպես նաև մասնակցային ֆորումները և ռեսուրսների բաշխման համար որոշումների համատեղ կայացման մարմինների ստեղծումը:

Գործընկերությունը կարող է տեղի ունենալ քաղաքական որոշումների կայացման գործընթացի բոլոր քայլերում և հատկապես արդիական է օրակարգի ձևավորման կամ իրականացման փուլերում:

4. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

4.1. Քաղաքացիական հասարակության մոբիլիզացումը ընտրություններում



Կայացած ժողովրդավարություններում, որոնք ունեն պարբերական ընտրությունների ավանդույթներ, ընտրողների իրազեկման մոտեցումների միջև զգալի տարբերություններ կան: Օրինակ՝ Ավստրալիայում և Կանադայում վաղուց ներդրված են ընտրողների իրազեկման ծավալուն ծրագրեր, որոնք գործում են ոչ միայն ընտրությունների ժամանակ, այլև ողջ տարվա ընթացքում: Որոշ եվրոպական երկրներում ընտրողների իրազեկման միջոցառումներն իրականացվում են հիմնականում ՔՀԿ-ների միջոցով: Հնդկաստանում ակտիվ և խիստ կուսակցականացված քաղաքական միջավայրը պահպանում է հետաքրքրությունը ընտրությունների նկատմամբ: Ամերիկայի Միացյալ Նահանգներում ընտրողների իրազեկումը և մոբիլիզացումն իրականացվում են տարբեր սուբյեկտների կողմից, այդ թվում՝ նահանգային մակարդակի ընտրական մարմինների, լրատվամիջոցների (օրինակ՝ MTV-ի «Rock the Vote» արշավը[12]) և բազմաթիվ ՔՀԿ-ների, հատուկ շահեր ներկայացնող խմբերի, մասնագիտական միավորումների ու արհմիությունների (ներառյալ AFL-CIO-ն[13]), ինչպես նաև քաղաքական կուսակցությունների կողմից: Սրանցից մի քանիսը կարող

[12] Rock the Vote-ը ԱՄՆ-ում ստեղծված քաղաքացիական նախաձեռնություն է, որի հիմնական նպատակը երիտասարդներին ընտրություններին ներգրավվելն է՝ հատկապես ընտրողների գրանցման և մասնակցության խթանման միջոցով: Այն հայտնի դարձավ հատկապես 1990-ականներից, երբ սկսեց համագործակցել երաժիշտների, փոփ մշակույթի և մեդիայի հետ՝ քաղաքական մասնակցությունը հասանելի դարձնելու գաղափարով: Օրինակ՝ համերգներ, MTV-ի արշավներ, հայտնի արտիստների մասնակցություն և սոցիալական արշավներ: Մանրամասները՝ https://www.rockthevote.org/about-rock-the-vote/

[13] AFL-CIO-ը ԱՄՆ-ի ամենամեծ արհմիութենական դաշնությունն է (labor federation), որը միավորում է տարբեր ոլորտների արհմիություններ: Այն ձևավորվել է 1955 թվականին՝ երկու խոշոր արհմիութենական միավորումների միաձուլմամբ՝ AFL և CIO:

են համարվել քաղաքական կամ քարոզչական կազմակերպություններ, այլ ոչ թե անկողմնակալ իրազեկողներ, սակայն մյուսներն ունեն ընտրողների գրանցման, իրազեկման և «քվեարկությանը մասնակցելուն խթանման» հարուստ պատմություն[14]:

Ընտրությունները հանդիսանում են այն առանցքային ժամանակաշրջաններից մեկը, երբ քաղաքացիական հասարակությունը ակտիվացնում է իր դերակատարությունը՝ հիմնվելով իր անկախության, մասնագիտական կարողությունների և հանրային վստահության վրա: ՔՀԿ-ները, պահպանելով իրենց ինստիտուցիոնալ ինքնուրույնությունը և քաղաքական չեզոքությունը, կարող են կամավոր հիմունքներով համախմբել ջանքերը՝ նպաստելու փաստահեն, անկողմնակալ և հանրային շահին ուղղված կրթական ու իրազեկման գործընթացներին:

Ընտրական շրջանում տարբեր հասարակական խմբեր կարող են ներգրավվել ինչպես ընտրողների իրազեկման և ընտրությունների դիտարկման գործընթացներում, այնպես էլ՝ քաղաքական բնույթ ունեցող գործունեություններում, ներառյալ՝ առանձին քաղաքական ուժերի կամ թեկնածուների աջակցման և քարոզչության ձևերը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ նման գործունեության բնույթը հաճախ կախված է տվյալ խմբի ինստիտուցիոնալ դիրքից, նպատակներից և ներքին կառավարման մեխանիզմներից: Այն խմբերը, որոնց հիմնական գործունեությունը չի կենտրոնանում քաղաքական կամ ընտրական գործընթացների վրա, սովորաբար ձևավորում են իրենց ներգրավվածության շրջանակը ներքին քննարկումների և անդամների համաձայնության միջոցով: Այսպիսի դերակատարների շարքում կարող են ընդգրկվել արհմիություններ, համայնքային խմբեր, գործարար և մասնագիտական միավորումներ, ինչպես նաև որոշ դեպքերում՝ կրոնական կառույցներ:

Ընտրական գործընթացներում կարող են ներգրավվել նաև բազմաթիվ այլ կազմակերպություններ և միավորումներ, որոնք նպաստում են ընտրությունների կազմակերպման և անցկացման գործընթացներին՝ միաժամանակ պահպանելով իրենց անկախությունը քաղաքական թեկնածուներից և ընտրական վարչարարությունից: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ նման դերակատարների մի մասը կարող է ունենալ հստակ ձևակերպված մանդատ՝ կապված քաղաքական և ընտրական գործընթացների հետ: Այդպիսիք են, օրինակ, այն ՀԿ-ները, որոնք զբաղվում են ընտրողների և քաղաքացիական կրթությամբ, հանրային շահերի պաշտպանությամբ, ընտրությունների դիտարկմամբ, ձայների զուգահեռ հաշվարկով (parallel vote tabulation - PVT) և մարդու իրավունքների պաշտպանությամբ: Այս համատեքստում հաճախ նշվում է նաև League of Women Voters-ի փորձը, որը ԱՄՆ-ում երկար տարիներ ներգրավված է ընտրողների իրազեկման և քաղաքացիական կրթության ծրագրերում՝ գործելով անկախ և ոչ կուսակցական հիմունքներով[15]:

---

[14] ACE ընտրական գիտելիքների ցանց, Քաղաքացիական և ընտրողների կրթություն, https://aceproject.org/ace-en/topics/ve/onePage

[15] https://aceproject.org/ace-en/topics/ve/onePage

4.2. ՔՀԿ-ների ընտրական ներգրավվածության մոդելներ. համեմատական մոտեցում

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ընտրական գործընթացներում ՔՀԿ-ների ներգրավվածությունը միատեսակ չէ. այն ձևավորվում է ըստ ինստիտուցիոնալ միջավայրի, իրավական սահմանափակումների և կազմակերպությունների մանդատի: Այս համատեքստում կարելի է առանձնացնել երեք կարևոր մոտեցում՝ օգտագործելով համեմատական օրինակներ:

- Քաղաքացիական կրթության և ոչ կուսակցական մասնակցության մոդել (օրինակ՝ League of Women Voters): Այս մոդելում ՔՀԿ-ները կենտրոնանում են՝
  - ընտրողների կրթության վրա
  - մասնակցության խթանման վրա
  - ընտրական գործընթացի մասին տեղեկատվության հասանելիության ապահովման վրա

<u>Հիմնական առանձնահատկություն</u>

Մոդելի ներքո գործող կազմակերպությունները չեն աջակցում կուսակցությունների կամ թեկնածուների, այլ աշխատում են ընտրական համակարգի ընդհանուր որակի և քաղաքացիական ներգրավվածության բարձրացման ուղղությամբ:

<u>Դերը</u>

- միջնորդ քաղաքացիների և ընտրական գործընթացի միջև
- կրթական և տեղեկատվական դերակատար
- հանրային քննարկումների կազմակերպիչ

- Պաշտոնական դիտորդական մոդել (օրինակ՝ ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ (ԺՀՄԻԳ): Այս մոդելը ավելի ինստիտուցիոնալացված է և հիմնված է միջազգային մանդատի վրա:

<u>Հիմնական գործառույթներ</u>

- ընտրությունների դիտարկում (նախընտրական, ընտրական և հետընտրական փուլերում)
- ընտրական գործընթացների գնահատում միջազգային չափանիշների հիման վրա
- հաշվետվությունների հրապարակում և առաջարկությունների ձևավորում

Հատկանշական տարբերություն

Այս մոդելը հաճախ ունի միջազգային իրավական կամ քաղաքական մանդատ, և դրա նպատակն է ոչ թե ներգրավել քաղաքացիներին, այլ՝ գնահատել գործընթացի ամբողջականությունը:

Քաղաքացիական դիտարկման և watchdog մոդել (Արևելյան Եվրոպա, հետխորհրդային տարածք)

Այս մոդելը զարգացել է այն երկրներում, որտեղ քաղաքացիական հասարակությունը փորձում է լրացնել ինստիտուցիոնալ վստահության բացերը:

Հիմնական գործառույթներ՝

- տեղական դիտորդական ցանցերի ստեղծում
- խախտումների փաստագրում
- ձայների զուգահեռ հաշվարկներ (PVT) մեթոդների կիրառում
- հանրային հաշվետվությունների և տվյալների հրապարակում

Օրինակային կազմակերպություններ

Տարածաշրջանում լայնորեն հայտնի են, օրինակ՝ մոլդովական Մասնակցային ժողովրդավարության աջակցման ասոցիացիան (ADEPT)[16], որը Մոլդովայի առաջատար ՀԿ-ներից է, մասնագիտացած է ընտրական գործընթացների և ժողովրդավարական բարեփոխումների մոնիտորինգի ոլորտում: ADEPT-ը հանդիսանում է մոլդովական «Հանուն ազատ և արդար ընտրությունների» քաղաքացիական կոալիցիայի քարտուղարությունը[17]:

Հատկանշական առանձնահատկություն

Այս մոդելը հաճախ ունի ավելի քաղաքացիական ակտիվիստական բնույթ, որտեղ դիտարկումը համադրվում է հանրային ճնշման և շահերի պաշտպանության գործունեության հետ:

[16] Մասնակցային ժողովրդավարության աջակցման ասոցիացիա, https://www.adept.md/en
[17] «Հանուն ազատ և արդար ընտրությունների» քաղաքացիական կոալիցիա, https://www.adept.md/en/activities/article/coalitia-civica-pentru-alegeri-libere-si-corecte

ԱՂՅՈՒՍԱԿ 3. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Մոդել	Հիմնական նպատակը	Դերակատարում	Քաղաքական չեզոքություն
Քաղաքացիական կրթություն (LWV)	Մասնակցության և կրթության բարձրացում	Միջնորդ և կրթական դեր	Բարձր
ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ	Ընտրությունների գնահատում	Պաշտոնական դիտորդ	Բարձր ինստիտուցիոնալ չեզոքություն
Քաղաքացիական հասարակություն/ watchdog	Վերահսկողություն և հաշվետվողականություն	Ակտիվ վերահսկող դեր	Տատանվող, բայց ոչ կուսակցական

Ընդհանուր եզրակացություն (takeaway մասնակիցների համար)

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ընտրական գործընթացներում ՔՀԿ-ների դերը չի սահմանափակվում մեկ ձևաչափով. այն կարող է տատանվել՝

- կրթականից մինչև վերահսկողական,
- ինստիտուցիոնալից մինչև քաղաքացիական ակտիվիստական,
- ամբողջովին ոչ կուսակցականից մինչև հանրային ճնշման ավելի ակտիվ ձևեր:

Այս բազմազանությունը կարևոր է հասկանալու համար, թե ինչպես է քաղաքացիական հասարակությունը տարբեր համակարգերում նպաստում ընտրական գործընթացների թափանցիկությանը և հանրային վստահության ձևավորմանը:

4.3. ՔՀԿ-ների դերը ընտրողների իրազեկման (voter education) գործում

Ընտրական գործընթացին աջակցող կրթությունը հայտնի է դարձել որպես «ընտրողների իրազեկում» (voter education), որտեղ հիմնական թիրախը ընտրողն է: Գոյություն ունեն կրթական մի շարք այլ ոլորտներ, որոնք անհրաժեշտ են ընտրությունների հաջողության համար, սակայն դրանք կարող են իրականացվել քաղաքական կուսակցությունների և ընտրական վարչարարության պատասխանատուների կողմից: Մյուս կողմից, ընտրողների իրազեկումը համարվում է առանձին և ինքնուրույն գործառույթ: Այն սովորաբար դիտարկվում է որպես ընտրական մարմնի գործառույթ և երբեմն վերջինիս կողմից պատվիրակվում է մասնավոր ընկերություններին ու ՔՀԿ-ներին: Այն նաև խթանվում է հանրային շահերով զբաղվող կազմակերպությունների կողմից՝ անկախ ընտրական մարմնի որևէ լիազորությունից:

Ի՞նչ է ընտրողների իրազեկումը

Ընտրողների իրազեկումը քաղաքացիական և ընտրական կրթության բաղադրիչ է, որի նպատակն է բարձրացնել ընտրողների տեղեկացվածությունը և աջակցել նրանց գիտակցված մասնակցությանը ընտրական գործընթացներին: Այն սովորաբար ներառում է ընտրական ընթացակարգերի, իրավունքների և մասնակցության մեխանիզմների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում՝ նպաստելով ընտրական գրագիտության զարգացմանը և ընտրական գործընթացների նկատմամբ վստահության ձևավորմանը:

Արդյո՞ք ընտրողների իրազեկումը բավարար է ժողովրդավարության համար

Ընտրողների իրազեկումը քաղաքացիական և ընտրական կրթության կարևոր բաղադրիչ է, որի նպատակն է աջակցել ընտրողների տեղեկացված մասնակցությանը և ընտրական գործընթացների վերաբերյալ իրենց իրավունքների ու ընթացակարգերի ընկալմանը: Այս գործընթացը նպաստում է ընտրողների կողմից իրենց քվեարկության իրավունքի ավելի արդյունավետ իրացմանը և քաղաքական կամքի արտահայտմանը ընտրությունների միջոցով: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ընտրողների պատրաստվածության և մասնակցության մակարդակը կարող է ազդել ընտրական գործընթացների նկատմամբ հանրային ընկալումների վրա, այդ թվում՝ լեգիտիմության, ներկայացուցչականության և հաշվետվողականության գնահատման համատեքստում: Ընտրողների իրազեկման նախաձեռնությունները սովորաբար ունեն թիրախավորված բնույթ և ուղղված են ընտրելու իրավունք ունեցող անձանց՝ անդրադառնալով ինչպես կոնկրետ ընտրական գործընթացներին, այնպես էլ ընտրական համակարգի ընդհանուր գործառույթներին: Դրանք հաճախ իրականացվում են ընտրական կրթության և տեղեկատվական գործունեության շրջանակներում:

Ընտրողների իրազեկումը հաճախ դիտարկվում է որպես ավելի լայն քաղաքացիական կրթության գործընթացի բաղադրիչ, որը կապվում է ժողովրդավարական մասնակցության ձևավորման և ընտրական գործընթացների ընկալման հետ: Քաղաքացիական կրթությունը սովորաբար ընդգրկում է ավելի լայն

շրջանակ, քան ընտրողների իրազեկումը՝ անդրադառնալով ոչ միայն ընտրողներին, այլ նաև քաղաքացիներին՝ նրանց դերակատարությանը ժողովրդավարական համակարգում և հանրային գործընթացներում: Այս մոտեցման շրջանակներում ուշադրություն է դարձվում քաղաքացիների մասնակցության տարբեր ձևերին՝ ընտրական և ոչ ընտրական համատեքստերում: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ որոշ երկրներում, հատկապես անցումային ժողովրդավարությունների կամ քաղաքական վերափոխումների փուլերում, ընտրություններին մասնակցությունը և ընտրողի կարգավիճակը ունեն առանձնահատուկ սոցիալական և քաղաքական նշանակություն: Նման համատեքստերում ընտրական իրավունքների ձևավորումը հաճախ կապված է եղել հասարակական գործընթացների և քաղաքական փոփոխությունների հետ: Ժողովրդավարական համակարգերի զարգացման ընթացքում ընտրական մասնակցությունը աստիճանաբար դիտարկվել է որպես քաղաքացիների քաղաքական ներգրավվածության բազմաթիվ ձևերից մեկը, որը գործում է այլ մասնակցային մեխանիզմների կողքին՝ հանրային կյանքում ներգրավվածության ավելի լայն շրջանակի համատեքստում:

ՔՀԿ-ների դերը ընտրողների իրազեկման (voter education)

Քաղաքացիական և ընտրական կրթության ոլորտում ՔՀԿ-ների գործունեությունը միջազգային մակարդակով ձևավորվել է որպես պետական մարմիններին լրացնող, բայց ինստիտուցիոնալ առումով՝ անկախ գործառույթ: Տարբեր երկրներում նրանք գործում են ընտրական հանձնաժողովների, միջազգային կազմակերպությունների կամ ինքնուրույն ցանցերի հետ համագործակցությամբ, սակայն պահպանելով ոչ կուսակցական բնույթ:

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ

ՔՀԿ-ները տարածում են ընտրական գործընթացի վերաբերյալ հիմնական տեղեկություններ՝

- ✓ ինչպես գրանցվել որպես ընտրող
- ✓ ինչպես և երբ քվեարկել
- ✓ ինչ իրավունքներ ունեն ընտրողները
- ✓ ինչպես օգտագործել քվեաթերթիկը

Սա համարվում է ընտրողների իրազեկման գործառույթի «տեխնիկական» առանցքը:

ϟ Օրինակ՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի ծրագրերում ՔՀԿ-ները ներգրավվում են ընտրողների իրազեկման արշավներում՝ ներառյալ տեղեկատվական նյութերի և հանրային

հանդիպումների կազմակերպումը, հատկապես երիտասարդների և խոցելի խմբերի համար[18]:

Քաղաքացիական և ընտրական կրթության իրականացում (civic education)

ՔՀԿ-ները չեն սահմանափակվում միայն «ինչպես քվեարկել» տեղեկատվությամբ. նրանք հաճախ իրականացնում են ավելի լայն կրթական ծրագրեր՝

- ✓ քաղաքացիության գաղափարի բացատրություն
- ✓ ժողովրդավարական արժեքների ձևավորում
- ✓ մասնակցության ձևերի ներկայացում

՛ ⊼ Օրինակ՝ Ընտրական համակարգերի միջազգային հաստատությունը (International Foundation for Electoral Systems (IFES) աշխատում է տեղական գործընկերների հետ՝ զարգացնելու քաղաքացիական գիտելիք և մասնակցային հմտություններ՝ ընդգծելով, որ տեղեկացված ընտրողը ավելի ակտիվ է քաղաքական գործընթացներում[19]:

---

[18] ԵԱՀԿ ԺՀՄԻԳ գործունեության ուղղությունները ընտրությունների ոլորտում, https://odihr.osce.org/odihr/elections

[19] Ընտրական համակարգերի միջազգային հաստատության գործունեության ուղղությունները քաղաքացիական կրթության և ընտրողների իրազեկման ոլորտում, https://www.ifes.org/our-expertise/election-integrity/voter-education-outreach

Թիրախավորված իրազեկման արշավներ (targeted outreach)

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ՔՀԿ-ները հաճախ հատուկ ուշադրություն են դարձնում խմբերին, որոնք սովորաբար քիչ ներգրավված են ընտրական գործընթացներում՝

- ✓ առաջին անգամ քվեարկողներ
- ✓ երիտասարդներ
- ✓ կանայք
- ✓ էթնիկ կամ սոցիալական փոքրամասնություններ

Օրինակ՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի աջակցությամբ իրականացված ընտրողների իրազեկման ծրագրերում կիրառվում են սիմուլյացիոն քվեարկություններ, ուսանողական հանդիպումներ և ինտերակտիվ ձևաչափեր՝ ընտրական գործընթացը ավելի հասանելի դարձնելու համար[20]:

Տեղական մակարդակի մոբիլիզացիա և համայնքային ներգրավում (community-based education)

ՔՀԿ-ները հաճախ իրականացնում են ընտրողների իրազեկման ծրագրեր տեղական մակարդակում՝

- ✓ համայնքային հանդիպումներ
- ✓ դռնից դուռ իրազեկում
- ✓ տեղական լեզուներով նյութերի տարածում
- ✓ կամավորների ներգրավում

Օրինակ՝ Եթովպիայում պետական ընտրական մարմինը պաշտոնապես հավատարմագրեց ՔՀԿ-ներին ընտրողների իրազեկում իրականացնելու նպատակով՝ պահանջելով տեղական ծրագրեր և համայնքային ներգրավում[21]:

Թվային և մեդիա գրագիտության վրա հիմնված ընտրողների իրազեկումներ

Վերջին տարիներին ՔՀԿ-ները լայնորեն կիրառում են՝

- ✓ սոցիալական մեդիա արշավներ
- ✓ հեռուստատեսային/ռադիո ծրագրեր

---

[20] ԵԱՀԿ ներկայացուցչությունն աջակցում է ընտրողների կրթության և իրազեկման արշավին Ալբանիայում 2025 թվականի ընտրություններից առաջ, https://albania.osce.org/presence-in-albania/572797

[21] Եթովպիայի ազգային ընտրական հանձնաժողովի գործառույթները. իրազեկման սեմինար-խորհրդակցություն 7-րդ համապետական ընտրությունների համար հավատարմագրված ՔՀԿ-ների համար, https://nebe.org.et/en/node/1244

- ✓ օնլայն տեղեկատվական հարթակներ

՛ Օրինակ՝ Ընտրությունների հարցերով եթովպական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիայի (CECOE) ընտրողների իրազեկումների նախաձեռնությունները հասել են միլիոնավոր քաղաքացիների՝ օգտագործելով ինչպես թվային, այնպես էլ ավանդական մեդիա միջոցներ[22]:

Ինստիտուցիոնալ համագործակցություն ընտրական մարմինների հետ

Որոշ երկրներում ՔՀԿ-ները ընտրողների իրազեկման և կրթության ոլորտում գործում են ոչ միայն ինքնուրույն նախաձեռնությունների շրջանակում, այլ նաև ներգրավվում են ընտրական հանձնաժողովների կամ համապատասխան պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերում: Նման համագործակցության ձևաչափերը կարող են ներառել՝

- ✓ վերապատրաստումների մասնակցություն
- ✓ մեթոդաբանական ուղեցույցների կիրառում
- ✓ համատեղ իրազեկման կամ տեղեկատվական նախաձեռնություններ

Որոշ համատեքստերում ընտրական վարչարարության մարմինները սահմանում են ընտրողների կրթության ընդհանուր շրջանակները, ինչպես նաև համակարգում կամ արտոնագրում են ՔՀԿ-ների ներգրավվածությունը այս գործընթացներում՝ ապահովելով գործունեության համապատասխանությունը սահմանված կանոնակարգերին և մեթոդաբանությանը:

՛՛ Օրինակ՝ Ուգանդայում ընտրական հանձնաժողովը ոչ միայն մշակում է ընտրողների իրազեկման ծրագրեր և օժանդակում է ՔՀԿ-ների գործունեությունը այս ոլորտում[23]:

---

[22] Ընտրությունների հարցերով եթովպական ՔՀԿ-ների կոալիցիա, https://cecoe.org/civic-and-voters-education/

[23] Ուգանդայում ընտրական հանձնաժողովի գործառույթները քաղաքացիական կրթության և ընտրողների իրազեկման գործում, https://www.ec.or.ug/voter-education-training?utm_source

Ընդհանուր եզրակացություն (takeaway մասնակիցների համար)

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ընտրողների իրազեկման նախաձեռնությունների շրջանակում ՔՀԿ-ների դերերը կարելի է ամփոփել երեք հիմնական ուղղությամբ՝

- տեղեկատվական դեր (ինչպե՞ս քվեարկել, ի՞նչ իրավունքներ ունեն ընտրողները)
- կրթական դեր (քաղաքացիական գիտելիք և մասնակցություն)
- մոբիլիզացիոն դեր (հատուկ խմբերի ներգրավում և մասնակցության խթանում)

Միևնույն ժամանակ, ՔՀԿ-ները գործում են տարբեր ինստիտուցիոնալ մոդելներում՝ ինքնուրույն նախաձեռնություններից մինչև ընտրական մարմինների հետ ֆորմալ համագործակցություն, ինչը ձևավորում է ընտրողների իրազեկման բազմաշերտ և ճկուն միջազգային համակարգ։

5. ՔՀԿ-ների դերը ընտրողների կրթության ոլորտում. ՀՀ 2021թ. ընտրությունների դասերը (case study)

Քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը սկսվեց նախընտրական փուլից՝ ընտրական օրենսդրության փոփոխությունների գործընթացում։ Առաջարկվող ընտրական բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկման գործընթացը հիմնականում ընկալվեց որպես ներառական՝ քաղաքացիական հատվածի ակտիվ մասնակցության միջոցով։ Համաձայն 2021 թվականի հունիս 20-ի ՀՀ Արտահերթ խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցի՝ թեև (ընտրական օրենսդրության փոփոխությունների շրջանակում) մեկ միասնական համապետական ցուցակին անցումը բավական տևական ժամանակ քննարկվել և պաշտպանվել էր բազմաթիվ քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության դերակատարների կողմից, այսպիսի նշանակություն ունեցող փոփոխությունը ընտրությունների օրվան այդքան մոտ չի համապատասխանում լավագույն գործելակերպին, և ԺՀՄԻԳ Ընտրությունների

դիտորդական առաքելության (ԸԴԱ) որոշ զրուցակիցներ մտահոգություններ հայտնեցին ընտրություններին այդքան մոտ փոփոխություններ կատարելու առումով[24]:



Քաղաքացիական վերահսկողության ծավալը և ազդեցությունը

Ընտրական գործընթացում քաղաքացիական հասարակության ներդրումը արտահայտվեց տեղական դիտորդական առաքելություններին մասնակցությամբ: 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների ժամանակ մինչև սահմանված վերջնաժամկետը ԿԸՀ-ը հավատարմագրել էր 19 տեղական դիտորդական կազմակերպություն՝ ընդհանուր թվով 8,748 դիտորդով[25], ինչի արդյունքում ապահովվեց դիտորդների ներկայություն տեղամասերի 77 տոկոսում[26]:

Կրթական առաքելություն և ներառականություն

ՔՀԿ-ները կենտրոնացել էին ընտրողների իրազեկման և խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության վրա: Օրինակ՝ ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդները և շատ զրուցակիցներ նշել են, որ 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների օրվանից 20 օր առաջ մեկնարկած ԿԸՀ ընտրողների ուսուցման արշավների տեսանելիությունը սահմանափակ է եղել ամբողջ երկրի տարածքում: Այն իրականացվել է պաստառների, գրքույկների, ինչպես նաեւ քվեարկության նոր ընթացակարգերի մասին հեռուստատեսային և ռադիոգովազդի միջոցով՝ ներառյալ չորս փոքրամասնությունների լեզուներով եւ տեսալսողական խնդիրներ ունեցող անձանց համար հասանելի ձևաչափով: ՔՀԿ-ները նյութեր էին նախապատրաստել մտավոր եւ

[24] 2021 թվականի հունիս 20-ի ՀՀ Արտահերթ խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույց, https://odihr.osce.org/sites/default/files/f/documents/2/0/508394.pdf , էջ 11,
[25] 2021 թվականի հունիս 20-ի ՀՀ Արտահերթ խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույց, էջ 6
[26] Տե՛ս նույն տեղում, էջ 37

ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց համար[27]: Սա կարևոր լրացում էր ԿԸՀ-ի ջանքերին, հատկապես այն պայմաններում, երբ տեղամասային կենտրոնների մոտ 67[28] տոկոսը ֆիզիկապես անհասանելի էր հաշմանդամություն ունեցող անձանց համար.

Մեդիա տիրույթում ևս ՔՀԿ-ները ունեցել են ներգրավվածություն: Օրինակ՝ «Մեդիա կենտրոնը» և «Երկխոսության մեդիա կենտրոնը» կազմակերպել էին բանավեճեր և հարցազրույցներ՝ ապահովելով այլընտրանքային հարթակներ ընտրողների համար:

Հետընտրական վստահության ամրապնդումը

ՔՀԿ-ների ներգրավվածություն տեղի է ունեցել նաև քվեարկության օրվանից հետո: Թեև 16 ընտրատարածքային հանձնաժողովներում իրականացված 83 վերահաշվարկների մեծ մասը նախաձեռնվել էր հենց Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից, որոշ դեպքերում դրանք հիմնված էին հենց տեղական դիտորդների դիմումների և նրանց կողմից արձանագրված շեղումների վրա[29]:

ԱՅՍՊԻՍՈՎ, 2021Թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՐՁԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ՈՐ ՔՀԿ-ՆԵՐԸ ՈՉ ՄԻԱՅՆ ՊԱՍԻՎ ԴԻՏՈՐԴՆԵՐ ԵՆ, ԱՅԼԵՎ ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ, ՈՐՈՆՔ ԼՐԱՑՆՈՒՄ ԵՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ:

[27] Տե՛ս նույն տեղում, էջ 14
[28] Տե՛ս նույն տեղում, էջ 36
[29] Տե՛ս նույն տեղում, էջ 39